ԿՈԼՈՏԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆԸ

Պոլսոյ պատրիարքական գահը բարձրանալէն ի վեր 11 տարի կ'անցնէր եւ դեռ Հայոց Պատրիարքը Լուսաւորչեան էր։

Աստուածատուր կաթողիկոս վախճանեցաւ 1725 Հոկտեմ. 10ին։ Կոլոտ անմիջապէս ժողով գումարեց Պոլսոյ Մայր Եկեղեցւոյ մէջ եւ Կաթողիկոս ընտրուեցաւ Գաղատիոյ Առաջնորդ՝ Ուլնեցի Կարապետ Եպիսկոպոսը, Ծ՚ԺԷ տիտղոսովը ծանօթ։ Կարապետ Եպս. Պոլիս հրաւիրուեցաւ եւ Մայր Եկեղեցւոյ մէջ ամենայն Հայոց Կաթողիկոս օծուեցաւ 12 եպիսկոպոսներէ, 1726 Փետր. 27, Մեծ պահոց Բ. Կիրակին։ Երեք օր ետքը՝ Հայոց Կաթողիկոսը իր Եպիսկոպոսական առաջին ձեռնադրութիւնն բրաւ Մայր եկեղեցւոյ մէջ Հայոց պատրիարքը բարձրացընելով Եպիսկոպոսական աստիճանին։ — Կարապետ Կթղ. քանի մ՚օր ետքը Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ Եպիսկոպոս ձեռնադրեց երեք վարդապետներն ալ։ Շղթայակրին փոխանորդը, Յովհաննէս (Հաննէ), որ Պոլիս եկած էր, Կոլոտի աշակերտներէն Թովմաս եւ Կուտինայի (= Քէօթահէայի) Առաջնորդ՝ Մարտիրոս վարդապետները։

Նոյն տարին, Օրթագիւղի Ս. Աստուածածին Եկեղեցին, որ Կոլոտի անխոնջ վաստակովը շինուած լմնցած էր, օծուեցաւ։ Օծման հանդէսին նախագահեց նորընտիր Կաթողիկոսը, Նորապակ Կոլոտին հետ։ Երբ Կոլոտ, Կաթողիկոսին հրամանաւ սրբագործութեան վերջին աղօթքը կարդաց, Կաթողիկոսն՝ որ բեմի աջ կողմը դրած էր իւր աթոռը, ոտք ելաւ, եւ անշուշտ ընտիր քարոզով մը Կոլոտի եւ Շղթայակրի ինքնին պերճախօս աշխատութիւններն ու ծառայութիւնները դրուատելէ եւ օրհնելէ ետքը, երկու Աթոռներուն բաժանումն ինքն ալ վաւերացուց եւ Երուսաղէմի